


52
Գրուենարմեր բալոր յերկրմերի, միացե՛ք

Յ Բ Ա Յ Ա Ն Գ

ՅԵՐԵՎԱՆԻ ԵԼԵՔՏՐԱՔԱՐՉԻ ՎԱԳՈՆԱՎԱՐՆԵՐԻ
ԿՈՆԴՈՒԿՏՈՐՆԵՐԻ, ՎԵՐԱՀՍԿԻԶՆԵՐԻ, ԿԱՅԱՐԱՆ-
ՊԵՏԵՐԻ, ՈՒՂԵՊԱՀԱԿԱՆԵՐԻ ՅԵՎ ՍԼԱԳԱՎԱՐՆԵՐԻ
ՀԱՄԱՐ



ԹԵՏՏՐԱՑ

1933 թ.

ՅԵՐԵՎԱՆ

14.05.2013

04 AUG 2010

625

2-34


1010
42751

ՀՀ ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՎԵՐԻ, ՄԱՍՏԵՐԻ

ՅՐԱՅԱՆԴ

ՑԵՐԵՎԱՆԻ ԵԼԵՔՏՐԱԳՐԴԻ ՎԱԳՈՆԱՎԱՐՆԵՐԻ
ՈՆԴՈՒԿՏՈՐՆԵՐԻ, ՎԵՐՈԶԱԿԻԶՆԵՐԻ, ԿԱՅԱՐԱԿ-
ՊԵՏԵՐԻ, ՈՒՂԵՊԱՀԱԿՆԵՐԻ ՑԵՎ ՍԼԱԲԱՎԱՐՆԵՐԻ
ՀԱՄԱՐ

2531



1983 թ.

ՅԵՐԵՎԱՆ

ՀՐԱՀԱՆԳ

ՅԵՐԵՎԱՆԻ ԵԼԵՔՏՐԱԿԱՐԾԻ ՎԱԳԱՆԱՎԱՐՆԵՐԻ
ՀԱՄԱՐ

ՀՆԴՀԱՆՈՒԹԻ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Յուրաքանչյուր վագոնավար պարտագոր և լավ խմանալ հրահանդը և իր աշխատանքի վերաբերյալ բոլոր հրամանները:

2. Աշխատանքի գնալիս վագոնավարը պարտավոր է իր հետ ունենալ հրահանդը:

3. Հարրած վիճակում ծառայության գնալու դեպքում վագոնավարը անհապաղ հեռացվում է աշխատանքից.

4. Վագոնի շարժման ժամանակ խստիվ արգելվում է խոսել, խմել, ծխել, կամ ուտելլը:

5. Ամենայն խստոթյամբ արգելվում է հոգալ իր բնական կարիքները վագոնների կամ կայարանային շենքերի մոտ:

6. Արգելվում է վագոնավարին շարժման ժամանակ վորեւ մեկին բարեկել, հանել գըլ-խարկը, կամ պատիվ տալ:

7. Հասարակության և իրար հետ հաջարեցության ժամանակ, վագոնավարները պարտավոր են իրենց պահել հանդիսությունը գաղափուրի:

8. Խստիվ արգելվում է խոսակցությամբ, կամ վեճի բռնվել հետիւոտների կամ ելեքտրագարշի գիծն անցնողների հետ:

9. Վտանգ սպառնալու զեպքում վագոնավարը պարտավոր և ոգտագործել բոլոր առկա միջոցները, դժբախտ պատահարը կանխելու համար.

10. Դժբախտ պատահարի ժամանակ վագոնավարը պարտավոր և քաղաքավարի ձեռվ խնդրել վկաների հասցեները, նշելով նրանց ազգանունը, անունը, հայրանունը և կոչումը.

11. Ամենայն խստությամբ արգելվում է վաղոնավարին սպառնացող վտանգի, ինչպես նաև շարժման հանկարծակի կասեցման ժամանակ թողնել վագոնը, բացառությամբ ստորև նշված վերապահումներին.

12. Ամենայն խստությամբ արգելվում է վագոնավարին կոնտրոլերի բռնակը հանձնել վորեւ մեկին, բացառությամբ.—

1. Յերթեեկության բարձր անձնակազմին պատկանողներին, վորոնք գործող կանոնների հիման վրա, և բացառապես իրենց ծառայության պարտականությունների կատարման ժամերին իրավունք ունեն վարել վագոնը.

2. Վագոնավարներին, վորոնք ըստ վերակարդի նշանակված են հերթափոխ.

Ծանոթություն.—Ամենայն խստությամբ արգելվում է վագոնի վարել հանձնել հարբած վիճակում գտնվող անձանց.

13. Գծում, բացի յերթեեկության ծառա-

յության գլխավոր գործակալից, վագոնավարը յենթօրկվում է կայարանապետին, վերահսկիչին և հրահանդիչներին.

14. Հերթապահության կամ պարկում վիճելու ընթացքում վագոնավարը յենթակացն ավագ հսկիչին, հերթապահ մանտյորին և վարպետին.

15. Բոլոր նկատած անսարքության, վագոնի վնասվածքի, ինչպես նաև պատահարների մասին վագոնավարը պարտավոր և հայտնել մերձակա կայարանապետին, վերահսկիչին, կամ հրահանդիչին, գրանցել ուղեմատյանում և վոչ ուշ հաջորդ որը ներկայանալ գրասենյակ մանրամասն բացատրություններ տալու համար.

16. Կանոնները խախտելու համար, համաձայն Աշխ. որենսդրքի 47 հոդ., վագոնավարը յենթակացն առաջանական մինչ հեռացնելին առանց նախազգուշացման:

ՎԱԴՈՆՆԵՐԻ ԸՆԹԴՈՒՆՈՒՄՆ ՅԵՎ ՀԱՆՁՆՈՒՄԸ ՊԱՐԿՈՒՄ ՅԵՎ ԳԾՈՒՄ

17. Վագոնավարը պատավոր և նախորդակին, կամ աշխատանքի անցնելու որը, սակայն իր ժամանակին, իմանալ ըստ վերակարդի, թե վո՞ր գծի վրա և վո՞ր ժամին և աշխատելու.

18. Վագոնավարը պարտավոր և լինել պարկում, վագոնը մեկնելուց 15 րոպե առաջ

և ներկայանալ վագոնները ուղարկողին կտմ նբա տեղակալին, վորից և ստանում է թույլ-տվություն աշխատանքի անցնելու: Այնուհետեւ վագոնավարը պարտավոր է ըստ վերակարգի իմանալ իր վագոնի համարը, ստանալ դործիքապահից վագոնի պարագանները, ինչպես նաև անցնել մատորային և կցիկ վագոնների ընդունելությանը:

19. Վագոնի ամբողջ գույքը և պահետային մասերը պետք է լինեն առկային չպես ողատուհանների, նույնպես և գոների՝ ապահիները պետք է լինեն անվնաս, նստարանները խնամքով մաքրված. Վոչ մի տեղ չպիտի նըսմարգեն վոտքերի, կամ քսուկի հետքեր: Վագոնային և մուտքի գոները պետք է բացվեն և փակվեն բոլորովին աղատ: Բոլոր ավագամանները պետք է լցրված լինեն լավ չորացված ավագով.

20. Սոնակային, խարիսխային և կոմպրեսորային յուղիչները պետք է լցված լինեն յուղով, ատամնավոր անիվները պետք է յուղված լինեն այնքան թանձր, վոր ատամների վրա չլինեն փայլուն տեղեր.

21. Կոլլեկտորները պետք է լինեն բաց փայլուն, խողանակապահի սղմիչ թաթիկները պետք է իջեցրված լինեն: Արգելվում է վագոնավարին զննելու համար հանել ածուխը:

22. Մատորային և կցիկ վագոնի վոտի և դլխալերելի զանդերը պետք է լսվեն լսվ-

23. Զ'ներփակելով կտրիչը և ավտոմատը, վագոնավարը պարտավոր է ստուգել. արդյոք աղատ տեղաշարժվում են յերկու կոնտրոլերների մեջ և փոքր բռնակները վագոնի գեպի առաջ և դեպի յետ ընթացքի, ինչպես նաև ելեքտրական արգելակի ժամանակ: Խստիվ արգելվում է այս գեպքում կոնտրոլերների բռնակի ամեն տեսակի բռնի տեղափոխումներ:

24. Ողային արգելակի մեքենավարի բըսնակի կոռունկը պետք է աղատ չարժվի մեկ ծայրից մյուս ծայրը, բոլոր պահամանների կոռունկները պետք է լինեն ծածկված:

Սարքին վագոնը պարկ մտնելուց վազոնավարը պետք բանա բոլոր պահամանների (ոեզերվուարներ) կոռունկները:

25. Կցիկ վագոնի կոռունկները պետք է ծածկված լինեն և կանգնած կոթով խողովակի կամ կոռունկի ուղղությամբ: Կցիկ և ողային արգելակով սարքավորված վագոնով ընթանալու ժամանակ նախարհակի կոռունկը պետք է ծածկված լինի, յետասրահակի կոռունկը բացված (կոռունկի կոթը պետք է կանգնած լինի կոռունկի լայնությամբ):

26. Ավագամանների լծակները պառայտի ժամանակ պետք է առաջ մղեն ավագամանի խուփը՝ բելոներին ավագ տալու համար, ինչպես նայել խուփը վերագարձնել նախկին դրությանը, վորպեսզի ավազն անընդհատ չըթափվի գծի վրա:

27. Մատորային և կցիկ վագոնի ձեռքի արդելակի չնիկը, արդելանիվը և ճռճռակը պետք ե լինեն անվնաս: Ձեռքի արդելակի շրջան պետք ե լինի անվնաս, առանց հանգույցների և արդելակը թուլացնելուց կանոնավոր իջնի և բարձրանա իլիկից (շպինգելից):

28. Մատորային և կցիկ վագոնի կոճղերը պետք ե լինեն մատու կեսից վոչ բարակ, բընիկներում ունենան յերիթներ (շպոնկի), արդելակելուց աշխատեն լրիվ մակերելույթով և նույնիսկ դիպչելու ժամանակ տեղահան չլինեն: Յետքաշիկ զապանակները պետք ե լինեն անվնաս, ձեռքի արդելակը թուլացնելուց կոճղերը պիտի հեռանան կալանդից առանց թեքվածքի:

29. Մատորային և կցիկ վագոնի ապահովիչ տախտակները պետք ե լինեն անվնաս և լավ ամրացված: Մատորային և կցիկ վագոնի միացնող պատը պետք ե լինի անվնաս և փակակեռերը լավ ամրացված ողակին:

30. Թափարգել չորսուն (բուֆերային բըրուս) պետք ե կանգնած լինի վագոնի առանցքի յերկարությամբ և համապատասխան բնիկում ունենա ցցյերկաթ (շտիր), կամ պարկած թափարգել հիմքի վրա:

31. Մատորային և կցիկ վագոնների սոնա կային բուքսերը պետք ե լցրված լինեն յուղով, ունենան սոնակալ և միջարկ: Յեթե բուքսերի վրա կան պլոմբներ, վագոնավարը ստուգում

և միայն պլոմբների ամրողությունը: Բուկուային կափարիչները պետք ե լինեն անվնաս և լավ ամրացված:

32. Աղեղը պետք ե լինի լավ սղոցված, նէրս չխրցած և առանց թեքվածքի: Աղեղը պետք ե ինքը բարձրանա հորիզոնական դրությունից: Աղեղի պարանը պետք ե լինի բավական յերկար և անցկացրված համապատասխան չանգին, կամ ճախարակին:

33. Ճակատային և կողքի ցուցանակները և գծի №-ը պետք ե լինեն իրենց տեղում և կանոնավորնեն վագոնի շարժմանուղղությունը:

34. Մատորային, կամ կցիկ վագոնի վրեւե անսարքության դեպքում, վագոնավարը պարտավոր և անհապաղ հայտնել վագոնները ուղարկողին:

35. Ձեռքի արդելակի, ավագամանների, րուկաների, սոնակայների, կոլեկտորների ատամնավոր անիվների, զանգերի, կոնտրոլերի և լուսավորության սարքին չլինելու գեպքում, վագոնավարն իրավունք չունի մեկնելու պարկից.

36. Պարկից մեկնելուց վագոնավարը պարտավոր և ուղեմատյանում նշանակել վագոնների և գծի, ինչպես նաև իր և կոնդուկտորի № №-ը և գրանցել պարկից մեկնելու ճիշտ ժամանակը, այդ բոլորը վավերացնելով սեփական ստորագրությամբ.

37. Արդելակների, ավագամանների ներ-

գործությունը, ընթացքը սարքին լինելը վազոնավարը պարտավոր է ստուգել պարկում փորձնական գծի վրա և տալ ստորագրություն վագոնը ու նրա կահավորումը սարքին վիճակում ընդունելու մասին.

38. Վագոնը հերթափոխ վաղոնավարին հանձնելուց, աշխատած վագոնավարը պարտավոր է բերանացի տեղեկացնել մատորային և կցիկ վագոնների նկատած բոլոր անսարքությունների մասին։ Հերթափոխ վագոնավարը էր կողմից հայտնաբերած թերությունների մասին պարտավոր է զեկուցել հենց առաջին բեյսի ժամանակ և վերոհիշված կարգով այդ առթիվ գրանցելով ուղեմատյանում, ստորագրելով վագոնն ընդունելու մասին և նշելով իր №-ը.

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Ուղեմատյանում պետք է նույնպես գրանցվեն այն բոլոր վրանասվածքները, վոր վագոնը ստացել և գծում։

39. Ընդունելով վագոնը, վաղոնավարը պարտավոր է խնամքով պահել նրա բոլոր մասները, հօկել նրա սարքին լինելու վրա, ժամանակին գննել բուկսերը, աղեղը, ապահովիչները և ավաղամանները լցնել ավագով։

40. Գծից պարկ վերադառնալուն պես, վագոնավարը պարտավոր է ստորագրությամբ ուղեմատյանում, մատորային և կցիկ վագոնը հանձնել հերթապահ մանտյորին, իսկ պահես-

տային մասերը գործիքապահին, ըստ վորում ստուգում է ուղեմատյանում վագոնի անսարքության մասին բոլոր գրանցումները, լրացընում չգրանցվածները, ինչպես նաև նշանակում պարկ վերադառնալու ժամանակը։

41. Խստիվ արգելվում է վագոնավարին հեռանալ վագոնից մինչև նրա լրիվ հանձնումը և վագոնը հերթապահ վարպետի կողմից մատնանշված տեղում կանգնեցնելը։ Վագոնն իր տեղում զետեղելուց հետո, վագոնավարը պարտավոր է անջատել ավտոմատը, կտրիչը, լուսավորությունը, յետ քաշել աղեղը, իսկ խոնավ յեղանակին բացել ողային արգելակով վագոնի պահամանը՝ խոնավ ողը դուրս թողնելու համար։

ՅԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ,
ԱՂԵՂ և ՈԴԱՑԻՆ ՑԱՆՑ

42. Աղեղը կոտրելուց, փչանալուց, կամ ողային բարը կտրելուց խուսափելու համար, ամենայն խստությամբ արգելվում է վոչ փոխադրված աղեղով ընդանալ գծով, պարկում, կամ փորձաշարժերի ժամանակ պահեստային գծում։

43. Լարի ցածրության, կամ խստիվ կախված լինելու հետեւանքով, աղեղը տեղափոխելու անհնարինության գեպքում, վագոնավարը պարտավոր է պահանջել կոնդուկտորից, վոր նա բանի աղեղը և յետ քաշի նրան լարից կրոնշտեյնի և կախվածքի տակից։ Համենայն

գեպս վագոնի ընթացքը տվյալ դեպքում պետք
է լինի խիստ դանդաղ:

44. Աղեղը լարից սահելու դեպքում, վա-
գոնավարը պարտավոր է անհապաղ կանգնեց-
նել վագոնը, արգելակել նրան ձեռքի արգելա-
կով, հանել կոնտրոլերի փոքր բռնակը,
բարձրանալ կտուրը և աղեղը կանգնեցնել նոր-
մալ դրության մեջ:

45. Յեթե վագոնն ընթանում է բուկսե-
րով, վագոնավարը պարտավոր է աղեղը պա-
հել իջեցրած:

46. Աղեղը կոտրվելու դեպքում, վագոնա
վարը պարտավոր է կուլիսները կորացնել
մինչ հորիզոնական դրությունը և ամուր կա-
պել նրանց՝ կամուրջի տակ լարի փչացումից
խուսափելու համար:

47. Յեթե աղեղը ձգում, կամ սաստիկ ձո-
ճում է լարը, վագոնավարը պարտավոր է ըս-
տուգել. արդյոք չեն զոյացել նրա վրա կտըր-
վածքներ և մոտակա կայարանում պահանջել
սղոցելու ալյումինին:

48. Յեթե վագոնն ընթանում է ուժգին
թափով այդ դեպքում, վագոնավարը պետք է
ստուգի. արդյոք չեն թուլացել կուլիսների
զարպանակները, վորի մեջ համողվելու համար
պետք է կորացնի աղեղը մինչ հորիզոնական
դրությունը և կամաց-կամաց արձակի պա-
րանը:

Ծանոթութ. — Վագոնի սրբնթաց շար-
ժումն առաջանում է հոսանքի հաճախակի

ընդհատումներից, նրա հետեվանքով,
վոր աղեղը հեռանում է լարից: Այդ վնա-
սում է լարին, աղեղին, մատորներին և
կարող է պատճառ հանդիսանալ ավտոմա-
տի անկմանը և թիթեղնիկի այրման:

49. Յեթե աղեղը փոխաձգվում է դեպի
առաջ, շարժման ուղղությամբ, վագոնավա-
րը պարտավոր է ստուգել. արդյոք կարճ չե-
աղեղը, կամ պահանջել, վոր թուլացվեն կու-
լիսերի զսպանակները:

50. Յուրաքանչյուր բեյսի վերջում վա-
գոնը չը ագայելիս վագոնավարը պարտավոր
է զննել աղեղը և նրա սնսարքության դեպքում
հայտնել կայարանավետին և պահանջել հեր-
թապահ փականագործից կարգի բերել, կամ
փոխել աղեղը:

51. Ողային գծի անջատիչների տակ, կայ-
մի վրա նշաղրած կարմիր և սպիտակ ողով,
իսկ վրոստի վրա՝ կարմիր գրոշակով, վագո-
նավարը պարտավոր է անջատել հոսանքը,
վորպեսզի լարի մոտ չառաջանան ուժեղ բորն-
կումներ (վորտային աղեղների): Բոնկումնե-
րը կարող էն այրել փայտե միջարկը, հա-
լեցնել լարը և ալյումինը.

52. Ամենայն խստությամբ արգելվում է
պարտնի փոխարեն աղեղին կապել մետաղա-
լար, այլապես նրան դիպչողները կարող են
ստանալ հարվածներ և այրվածքներ: Բացի
դրանից, մետաղալարը չփվելով վագոնի մե-
տաղյա մասերին կարող է հոսանքը փոխանցել

գեպի ըելսները և առաջ բերել կարճատե միացում և թափքի այրում:

53. Յերթեվեկության ժամանակ վագոնավարը պարտավոր է ժամանակ առ ժամանակ դիտել լարը և մի վորեւ թերություն նըկատելուց անհապաղ հայտնել մոտակա վերահսկիչն:

54. Ողային լարերի փշացման դեպք հայտնաբերելուց, վորի հետեւանքը կարող է լինել ազեղի վնասում, վագոնավարը պարտավոր է վնասված տեղից հեռանալ 25 մետր, նզնեցնել վագոնը և ուղարկել կոնդուկտոր, նախազգուշացնելու հաջորդ վագոնին, վնասված տեղից անցնեն կորացրած աղել՝ վերջինս կտրվելուց զերծ պահելու հար: Միայն յերկրորդ վագոնն անցնելուց հետո առաջինը կարող է ճանապարհ ընկնել, իսկ յերկրորդ վագոնի վագոնավարը մնում է տեղում մինչ հատուկ անձնավորության ժամանում՝ դժբախտ պատահարը կանխելու համար, կամ մինչ վերանորոգման սայլակի դաւ:

55. Լարը կտրվելու և գծի վրա ընկնելու դեմքում, վագոնավարը պարտավոր է փայտե աքաննով լարը բարձրացնել գետնից:Կոնդուկտորը վերցնում է պահեստային պարանը, պատրաստում է հանդույց, արագությամբ նրանով բռնում է քաշում և գետնից լարն առանց դիպչելու նրան և պարանը կապում մոտակա կայմին, այնպես վոր լարը չկպչի վոչ

գետնին և վոչ կայմին: Վագոնավարը պարտավոր է տեղում մնալ մինչ վերահսկիչի, կամ վարչական այլ անձնավորության ժամանումը, արդելելով վորեւ մեկին մոտենալ լարին: Պատահարի մասին կայարանապետին հեռախոսով հայտնում է կոնդուկտորը:

ԱՎՏՈՄԱՏ ՑԵՎ ԿՏՐԻՉ

56. Ամենայն խստությամբ արգելվում է ներփակել և անջատել ավտոմատը կամ կտրիչը բռննցքների, կամ վորեւ այլ առարկայի հարվածներով բռնակին:

57. Վագոնը շարժվելուց և վերելքում կանգնելուց հետո վագոնավարը պարտավոր է անձամբ համոզվել, վոր ավտոմատը և կտրիչը ներփակված են:

58. Ամենայն խստությամբ արգելվում է սեպել ավտոմատը, վորովհետեւ վագոնավարը զրկում է վագոնը գլխավոր ապահովիչից:

59. Ամենայն խստությամբ արգելվում է մինչ վագոնի լրիվ կանգնելը ներփակել անջատված ավտոմատը:

60. Վագոնավարը պարտավոր է անջատել ավտոմատը, կամ կտրիչը յուրաքանչյուր անգամ, յերբ անհրաժեշտ է փոխել թիթեղիկը, կամ բացել կոտրուլերի պատյանը, այլապես նա կարող է ստանալ ուժեղ հարված և այրվածք:

61. Կոնտրուլերի մեծ բռնակը անջատելու անհրաժեշտության դեպքում (հանել ուժից)

նրա հետեւվանքով, վոր մատները զողվել են ցանցիկներին, կամ այլ պատճառով, վաղոնավարը պարտավոր ե անհապաղ անջատել սրհակի վրա գտնվող ավտոմատը և կտրիչը, վորպեսզի արգելի հոսանքի ընթացումը դեպի կոնտրոլերը և մատորները։ Միայն դրանից հետո վագոնավարը պետք ե արգելակի վագոնը և զննի կոնտրոլերը։

62. Ավտոմատի հաճախակի անկման գետքում վագոնավարը պարտավոր ե զննել. արդյոք չի արգելակվում վագոնն ինքն իրեն, լավ են յետ քաշվում կոճղերը, չեն թուլացել կուլիսների զսպանակները։ Վերջապես մատորներից մեկի անջատումով պետք ե պարզել. արդյո՞ք չեն վնասաված նրանցից վորեն մեկը, հասցնել վագոնը մերձակա կայարաններից մեկը և պահանջել վագոնը զետեղելու պահեստային գծում։

63. Վերելքում ավտոմատի անկումից հետո, վագոնավարը պարտավոր ե անձամբ ներփակել նրան՝ վագոնը լրիվ կանգնեցնելուց հետո և վերելքը բարձրանալ հաջորդաբար ներփակված մատորներով։

ԱՊԱՀՈՎԻՉ ԹԻԹԵՂԻԿԼ ՅԵՎ. ԱՐԿԴԼ

64. Ամենայն խստությամբ արգելվում ե դիպչել թիթեղիկն առանց ավտոմատի և կտրիչի անջատման։

65. Ամենայն խստությամբ արգելվում ե մինչ վագոնի լրիվ կանգնեցնելը փոխել կամ հաղցնել թիթեղիկը։


12

66. Ամենայն խստությամբ արգելվում ե հաղցնել յերկու թիթեղիկ, վորովհետեւ նըրանք չեն կարող ելեքտրական սարքավորման համար ծառայել վորպես ապահովիչներ։

67. Այրված թիթեղիկը փոխելուց վագոնավարը պարտավոր ե գլխիկների հարթ մակերեսով նորը կցել կոնտակտներին և պտուտակակով ամուր սեղմել թիթեղիկին։

68. Այրվածը փոխարինելու համար նոր թիթեղիկի բացակայության դեպքում, վագոնավարը մետաղալարով միացնում ե ապահովիչ արկղի պտուտակներն իրար հետ, ծայրերը մի քանի անգամ փաթաթելով պտուտակի վրա։ Սրանից հետո մատորները ներփակում ե միայն հաջորդաբար՝ ելեքտրական սարքավորման փչացումից կամ մետաղալարի նոր այրումից խուսափելու համար և վագոնը հասցնում մինչեւ մերձակա կայարանը, վորտեղ կարելի յետանալ թիթեղիկ։

69. Յեթե սկսի այրվել ապահովիչ արկղը, վագոնավարը պարտավոր ե անհապաղ անջատել կտրիչը, ավտոմատը, կամ աղեղը հեռացնել լարից և արգելակել վագոնը։ Ապա վագոնավարը պոկում ե ամբողջ արկղը, մաքրում ե գանակով լարերի յերկու ծայրերը, մեկ լարը զնում ե մյուսի վրա և վորեն մետաղալարի ոգնությամբ կապում նրանց մի քանի անգամ փաթաթելով լարերի մոտ։ Սրանից հետո մատորները ներփակում ե միայն հաջորդաբար և վագոնը հասցնում մինչ մերձակա պահեստային գիծը։



70. Յեթե թիթեղիկը այրվի վերելքում,
վագոնավարը պարտավոր և վարվել հետեւյալ
կերպ։

1. Ողային արդելակի բռնակը փոխա-
շարժել մինչև ծայրյեղը։

2. Զեռքի արդելակի շղթան ձգել մինչև
վերջը։ Շնիկը զնել՝ արդելանիվի և ողային
արդելակի վրա։

3. Անջատել ավտոմատը և կտրիչը։

4. Հանել կոնտրոլերի փոքրիկ բռնակը և
փոխել թիթեղիկը։

5. Ներփակել ավտոմատը և կտրիչը ու
կոնտրոլերի փոքրիկ բռնակը զնել «Առաջ»
նշանի վրա։

6. Ներփակել կոնտրոլերի մեծ բռնակը
առաջին բաժանման վրա և միաժամանակ թու-
լացնել արդելակը։

7. Վերելքը բարձրանալ Հաջորդաբար
միացված մատորներով՝ թիթեղիկների կրկ-
նակի այրումից խուսափելու համար։

72. Թիթեղիկի կրկնակի այրման գեղ-
քում վագոնավարը հարթ տեղում պարտավոր
և զնել արդյօք լավ և ամրացված յեղել թի-
թեղիկը և մաքուր են կոնտակտները, վագոնը
ինքնաբերաբար չի արդելակում, կոճղերը չեն
ձղված և մեկ կոնտակտից մյուսը պետք է
անցնի սակավ։

72. Յեթե այրվեն յերեք թիթեղիկներ,
վագոնավարը պարտավոր և մատորների հեր-
թական ներփակումով ստուգել արդյօք չի

փչացել նրանցից վորևե մեկը, վագոնը մեկ
մատորի ողնությամբ հասցնել մերձակա կա-
յարանը և յերթը չխանգարելու համար պա-
հանջել վագոնը զետեղելու պահեստային գը-
ծում։

ԿՈՆՏՐՈԼԵՐ

73. Ստանալով շարժման ազգանշան և
համոզվելով, վոր գիծն ազատ և, վագոնավա-
րը մեքենավարի կուռնկի բռնակը պետք և փո-
խադրի «Շարժում» նշանի վրա, կոնտրոլերի
փոքրիկ բռնակը փոխադրի «Առաջ» նշանի վր-
րա, թուլացնի ձեռքի արդելակը և ապա կոնտ-
րոլերի մեծ բռնակը փոխադրի մեկը, յերկու
և այլին նշանի վրա։

74. Ամենայն խստությամբ արդելվում և
առանց արդելակների թուլացման ներփակել
հոսանքը, բացառությամբ վերելքում կանգ-
նելուց հետո։ Ողային արդելակով արդելակե-
լու ժամանակ, վագոնավարը կարող է ներ-
փակել կոնտրոլերի մեծ բռնակը, միայն նը-
րանից հետո, յերբ կթուլացնի արդելակը։

75. Կոնտրոլերի բոլոր զրությունները
բաժանվում են փոխանցման, վորոնց վրա չի
կարելի յերկար պահել կոնտրոլերի մեծ բռն-
ակը և բանվորական կամ յերթելեկության,
վորոնց վրա վագոնավարը մեծ բռնակը կարող
է պահել այնքան ժամանակ, վորքան նրան
անհրաժեշտ է։

76. Յերթելեկության, կամ բանվորական
բաժանումները վագոնների վրա համարվում
են 5 և 9-ը։

77. Կոնտրոլերների մյուս բաժանումները փոխանցման են և նրանց վրա վագոնավարը կոնտրոլերի մեծ բռնակը պարտավոր և հարթ տեղում պահել յերեք վարկյան և մինչև 7 վարկյան վերելքում, այնպես վոր մատորն առաջ ընթանա սահուն, առանց հրահարումների:

Ծանոթութ. 1.—կոնտրոլերների փոխանցվաղ բաժանումների ժամանակ հոսանքը անցնում է դիմադրության միջոցով (բեռուտպատ), վորը աստիճանաբար տաքանում է: Կոնտրոլերի մեծ բռնակը տեվականորեն փոխանցման բաժանման վրա թողնելու վեպքում բեռուտպատը կարող է այրվել և բոցավառել վագոնի թափքը:

2. Կոնտրոլերի մեկ բաժանումից մյուս բաժանման հաճախակի անցնելը առաջացնում է հրդեհումներ և անհաղթատացնում ուղեկիորներին, բավականին վրանառում մատորներին, ինչպես նաև առաջացնում թիթեղիկների այրում կամ ավտոմատի անկառ:

78. Վագոնավարը բոլոր նեղ փողոցներով, պարտավոր և վագոնը վարել առաջին և յերկրորդ բանվորական բաժանումների վրա, վորուեղ պահանջում և առանձնառաջես զգույշ յերթեվեկություն: Այս դրության ժամանակ վագոնի արագությունը միջինն է, հոսանքը մեկ մատորից անցնում է մյուսը, այսինքն մատորները միացված են հաջորդաբար:

79. Վագոնավարը լայն և ազատ փողոցներում պարտավոր և անցնել յերթեվեկության, կամ բանվորական բաժանման վրա: Այս դրության ժամանակ վագոնն ընթանում է ամենամեծ արագությամբ, հոսանքը միաժամանակ անցնում է յերկու մատորները, այսինքն մատորները միացված են զուգահեռաբար:

80. Կցիկ վագոնով յերթեվեկելու ժամանակ վագոնավարը պարտավոր և վերելքում բարձրանալ հաջորդաբար:

81. Վերելքի կիսում վագոնը կանգնելու գեղքում, վագոնավարը պարտավոր և վերելքն անցնել հաջորդաբար՝ ավտոմատի անկումից և թիթեղիկի այրումից խուսափելու համար:

82. Վագոնն ընթացքի գցելուց, վագոնավարը պարտավոր և համոզվել, վոր վագոնը չարժեվում է և անիշները չեն բուքսիրում, հակառակ զեպքում վագոնավարը պարտավոր և անջատել հոսանքը և նորից ներփակել, աստիճանաբար բելմների վրա ցրելով ավազ:

83. Արգելվում է կոնտրոլերի բռնակը ներփակել յերկրորդ բաժանմունքից դեռ, յեթե վագոնն առաջ չի ընթանում, վորովհետեւ ուժեղ հոսանքից մատորը կարող է այրվել:

84. Խստիվ արգելվում է կոնտրոլերի բռնակը կանգնեցնել բաժանումների միջեւ, այլապես կարելի յե այրել մատորները և կոնտրոլերների սեկտորները:

85. Մոտորի փչացումից խուսափելու համար, հոսանքն անջատելուց, վագոնավարը պարտավոր է կոնտրոլերի բռնակը միանդամից փոխադրել «կանգ առ» նշանի վրա:

86. Կոնտրոլերի մեծ բռնակն անջատելու անհնարինության դեպքում վագոնավարը պարտավոր ե անմիջապես անջատել ավտոմատը, կամ կտրիչը, վորը դաշնվում ե գլխի վերեվում և այդպիսով դադարեցնել հոսանքի մուտքը դեպի կոնտրոլերը ու կանխել այրումը, հետո արգելակել վագոնը:

87. Յեթե վագոնն ունի բավականաչափ արագություն, վագոնավարը անջատումից հետո կարող ե կոնտրոլերի բռնակը միանդամից փոխադրել առաջին յերթեվեկության բաժանման վրա, վորապեսզի հոսանքը իզուր ժամանակ չանցնի դիմադրության միջոցով:

88. Ելեքտրական արգելակը ներփակելու ժամանակ վագոնավարը պարտավոր ե մեկ բաժանումից անցնել մյուսը յերեք վարկյանից վոչ չուտ և միայն վտանգի դեպքում թույլատրվում ե ներփակել միանդամից յերկրորդ բաժանման վրա, իսկ հետո յերեք վարկյանի բնորդառումներով հետեւյալ բաժանման վրա: Բուհսելուց խուսափելու համար անդամ չոր յեղանակին անհրաժեշտ ե ցրել ավագ:

89. Ամենայն խստությամբ արգելվում է կոնտրոլերի մեծ բռնակը մեծ ուժից փոխադրել ելեքտրական լրիվ արգելակի վրա, այլապես կարելի յե այրել լարերը, մոտորը և կոտրել ատամնավոր անիվը:

90. Խստիվ արգելվում ե առանց կարիքի հանել կոնտրոլերի կաշվե պատյանը:

91. Կոնտրոլերի մատները զննելու կամ մոտորներից մեկը անջատելու անհրաժեշտության դեպքում, վագոնավարը պարտավոր ե նախորոք անջատել ավտոմատը կամ կտրիչը՝ հարվածից կամ այրումից խուսափելու համար: Միաժամանակ վագոնավարը պարտավոր ե ուշադրությամբ հսկել, վոր չկեղաստվի կոնտրոլերը, այլապես դրանից կոնտրոլերը կարող է այրվել:

Ա. Բ Գ Ե Լ Ա Կ

92. Ամենայն խստությամբ արգելվում ե նախքան հոսանքի անջատումը, արգելակել վագոնը:

93. Վագոնը արգելակելու, այսինքն կանգնեցնելու համար վագոնավարը կարող է ուղարկել ձեռքի արգելակով, ողային արգելակով, ելեքտրական արգելակով կամ առև յետին ընթացք:

94. Վագոնավարը պարտավոր ե ոգտվել ձեռքի արգելակով.

1. Պարկից մեկնելուց և գծից պարկ վերադառնալուց.

2. Պարկում, նրա մոտ կամ պահեստային գծում փորձնական շարժեք կատարելու ժամանակի.

3. Միանալու համար կցիկ վագոնին մոտենալուց.

4. Յերկարատեղ կանգառների ժամանակ
վերելքում, թեքվածքներում և ծայրերում.

5. Թիթեղիկը փոխելու և վաղոնը զննե-
լու համար վագոնից իջնելու անհրաժեշտու-
թյան դեպքում.

6. Ողային արգելակի բացակայության
կամ անսարքության դեպքում:

95. Զեռքի արգելակով արգելակելու դեպ-
քում, վաղոնավարը պարտավոր և չնիկը սեղ-
մել արգելանիվին և զատելով արգելակային
բռնակը, կամ թափանիվը (մոխավիկ), մինչ
վերջ փաթաթել շղթան իլիկի վրա (շպինդել):

96. Զեռքի արգելակի շղթան կտրվելուց,
կամ փչանալուց, վաղոնավարը պարտավոր և
հասցնել մինչեւ մերձակա պահեստային գի-
ծը, կամ կայարանը և կայարանապետից պա-
հանջել վագոնը այնպես ըջել, վորովեսզի ըստ
ընթացքի նախասրահակի վրա լինի անվնաս
շղթան:

97. Վագոնավարը պարտավոր և ոգտվել
ողային արգելակից.

1. Վագոնի կանգնեցման բոլոր դեպքե-
րում:

2. Դժբախտ պատահարների ժամանակ,
յերբ զծի վրա յեն գտնվում մարդ, կամ կեն-
դանի և յերբ անհրաժեշտություն է զգացվում
իջեցնել ցանցը՝ արդպիսին լինելու դեպքում:

3. Շելսների վրա ավագ ցրելու անհրա-
ժեշտության դեպքում, յեթե ավագամաններն
աշխատում են ողի ողնությամբ:

98. Վագոնավարը պարտավոր և հետե-
վել, վոր պահամաններում և խողովակներում
ողի ճնշումը չգերազանցի յերեք ատմասֆե-
րայից, այլապես հնարավոր և պահամանների
փչացում և կոճղերի ամուր սղմումից բելսնե-
րի ձմլում:

99. Վագոնավարը պարտավոր և ոգտվել
ելեքտրական արգելակից. —

1. Արագ ընթացքի ժամանակ վագոնը
կանգնեցնելու անհրաժեշտության դեպքում.

2. Զեռքի և ողային արգելակների անսար-
քության դեպքում:

100. Արգելվում և վագոնավարին առանց
կարիքի ոգտվել ելեքտրական արգելակով,
այլապես նման դեպքերում արագ տաքանում
և փչանում են մատորներն ու ատամնավոր ա-
նիվները:

101. Ելեքտրական արգելակի ժամանակ
կոնտրոլերի բռնակը պետք և կանգնած լինի
վագոնի շարժման ուղղությամբ:

102. Վորովհետեւ ելեքտրական արգելակն
ամբողջովին չի կարող կանգնեցնել վագոնը,
ուստի վերջնական կանգառի համար վագո-
նավարը պարտավոր և ոգտվել ողային, կամ
ձեռքի արգելակով և բելսների վրա ցրել ա-
վող:

103. Վագոնը կանգնեցնելու համար վա-
գոնավարը կարող և ոգտվել յետին ընթացքով
միայն ծայրահեղ դեպքերում՝ վագոնը դան-
դաղ ընթանալու ժամանակ, յեթե սարքին չի

ողային ու ձեռքի արգելակը և միայն ելեք-
տրական արգելակը լիակատար ողտադործե-
լուց հետո։ Յետին ընթացքով ողտվելուց,
այդպիսին կատարվում է առաջին բաժանման
վրա, հակառակ պարագայում անողութ է և
կարող է առաջ բերել ավտոմատի անկում։

104. Սովորական կանգառների ժամանակ
վագոնավարը պարտավոր է նախորոք անջա-
տել հոսանքը և մեքենավարի կոռունկի կոթը
կամաց-կամաց փոխադրել աջից դեպի ձախ
«Արգելակ» նշանի վրա, ու առանց ուժեղ հրբն
դի կանգնեցնել վագոնը։ Կանգառի ժամանակ
հրինդը թուլացնելու համար, վագոնավարը
պարտավոր է մեքենավարի կոռունկի միջոցով
արցելակային դլանակից դուրս թողնել մի քիչ
ող։ Վագոնի կարուկ արգելակելուց ցնցվում
է վագոնի թափքը, փշանում են անիմների կա-
լանդները, բելոները և խիստ մաշվում կոճ-
դերը։

105. Ողային արգելակով ուժեղ արգելա-
կելուց, յեթե վագոնը կընթանա առաջ վոչ
պտտող անիմներով, վագոնավարը պարտա-
վոր է վարժել հետեւյալ կերպ։

1. Թուլացնել արգելակները, բելոներին
տալ ավագ և ապա

2. Նորից արգելակել ողային արգելա-
կով։

106. Յերկարատեւ կանգառների ժամա-
նակ սարի վրա և վագոնից իջնելու անհրա-
ժեշտության դեպքում վագոնավարը պարտա-

վոր և վագոնը նախ արգելակել ողային արգե-
լակով, ապա ձգել ձեռքի արգելակի շղթան,
մեքենավարի կոռունկի կոթը զնել բացթողիկ
վիճակում (նա ուսպուակ), վորպեսզի մնալով
սրահակի վրա համոզվի, վոր ձեռքի արգելա-
կը սպահում է լավ։

107. Ելեքտրական արգելակով թեքվածք-
ներում վագոնի ընթացքը դանդաղեցնելու ան-
հրաժեշտության դեպքում, վագոնավարը պար-
տավոր է անջատել հոսանքը, մեծ բռնակը
փոխադրել ելեքտրական արգելակի առաջին
բաժանման վրա և մատորների փչացումից և
ուժեղ հրնդումներից խուսափելու համար աս-
տիճանաբար վոչ արագ յերեք վարկյանից
անցնել յերկրորդ, և մինչեւ վերջին բաժա-
նումը (7)։

108. Առջեցից ընթացող վաղոնին հանդի-
պելու, բեռնակիր կամ մտրդատար կառքերին
դիպչելու վատանդի ժամանակ կոնդուկտորի ա-
հազանգելուց վագոնավարը պարտավոր է վար-
վել հետևյալ կերպ։

1. Զախ ձեռքով արագ անջատել հոսանքը.

2. Կոնդուկտորի մեծ բռնակը կանգնեցնել
ելեքտրական արգելակի յերրորդ բաժանման
վրա.

3. Անմիջապես աջ ձեռքով մեքենավարի
կոռունկի բռնակը փոխադրել ձախից աջ մինչեւ
յերջ, խել

4. Զախ ձեռքով կոնդուկտորի մեծ բռնակը

փոխադրել ելեքտրական արգելակի վերջին
բաժանման վրա (7).

109. Նույն պայմաններում, սակայն ողա-
յին արգելակի անսարքության դեպքում վա-
գոնավարը պարտավոր է վարվել հետեւյալ
կերպ. —

1. Զախ ձեռքով արագորեն անջատել հո-
սանքը.

2. Կոնտրոլերի բոնակը միանդամից
կանգնեցնել ելեքտրական արգելակի Յ-ըդ բա-
ժանման վրա.

3. Ապա աջ ձեռքով ձգել ձեռքի արգելակի
շղթան.

4. Բոնակն աստիճանաբար փոխադրել
մինչև վերջին բաժանում և կոնտրոլերի բըռ-
նակը թողնել լրիվ արգելակի վրա, իսկ

5. Աջ ձեռքով մեքենավարի կոռունկի լծուկը
Մջել դեպի ծայրահեղ ձախ դրությունը.

110. Նույն պայմաններում, սակայն ողա-
յին և ձեռքի արգելակների անսարքության
դեպքում, վագոնավարը պարտավոր է անհո-
պաղ վարվել հետեւյալ կերպ. —

1. Զախ ձեռքով անջատել հոսանքը.

2. Մեծ բոնակը կանգնեցնել ելեքտրական

արգելակի յերրորդ բաժանման վրա.

3. Այնուհետեւ կոնտրոլերի մեծ բոնակը
հասցնել մինչև ելեքտրական արգելակի վեր-
ջին բաժանումը, իսկ

4. Զախ ձեռքով փոխադրել մեքենավարի

կոռունկի բոնակը՝ բելսներին ավազ տալու հա-
ժար և այս բոլորից հետո ծայրահեղ դեպքում
յետին ընթացք տալ առաջին բաժանման վրա.

111. Գծի վրա վագոնի մոտ մարդ կամ
կենդանի յերեալուց, վագոնավարը պարտա-
վոր է վարվել հետեւյալ կերպ. —

1. Զախ ձեռքով արագորեն անջատել հո-
սանքը.

2. Կոնտրոլերի մեծ բոնակը կանգնեցնել
ելեքտրական արգելակի յերրորդ բաժանման
վրա.

3. Այնուհետեւ ձախ ձեռքով կոնտրոլերի
մեծ բոնակը փոխադրել ելեքտրական արգելա-
կի վերջին բաժանման վրա.

4. Ողային արգելակի ողնությամբ աջ
ձեռքով արգելակի, փոխադրելով կոթը մինչև
վերջ, տալով բելսներին ավազ և իջեցնելով
ցանցը.

112. Նույն պայմաններում, սակայն վա-
գոնի դանդաղ ընթացքի և ողային ու ձեռքի
արգելակների անսարքության դեպքում, վա-
գոնավարը պարտավոր է վարվել հետեւյալ
կերպ. —

1. Արագ փոխադրել կոնտրոլերի մեծ
բոնակը «կանգ տո» նշանի վրա.

2. Կոնտրոլերի փոքր բոնակը «Յետ» նշա-
նի վրա.

3. Այնուհետեւ կոնտրոլերի մեծ բոնակը

կանգնեցնել առաջին, յերկրորդ բաժանման վը-
րա, մինչև վագոնի լրիվ կանգնեցնելը.

4. Այսուհետեւ անջատել կոնտրուլերի մեծ
բռնակը.

113. Կցիկ վագոնը վերելքում պոկվելուց,
մատորային վագոնի վագոնավարը պարտավոր
ե վարդել հետեւյալ կերպ.

1. Անհապաղ անջատել հոսանքն, այսինքն
հանել ուժից կոնտրուլերի մեծ բռնակը.

2. Արգելակել վագոնը ձեռքի արգելակով
մինչև վերջ և չնիկը դնել արգելանիվի վրա.

3. Ռւդարկել մատորային վագոնի վագո-
նավարին պարզելու. արդյո՞ք հնարավոր չե-
միացնել պոկված վագոնը.

4. Պոկված վագոնի միացնելու հնարա-
վորության դեպքում, վագոնավարը պարտա-
վոր ե հանել կոնտրուլերի մեծ բռնակը և մեքե-
նավարի կոռուկը, անցնել յետասրահակը, ձգել
մինչև վերջ ձեռքի արգելակի շղթան և չնիկը
դնել արգելանիվի վրա.

5. Հրամայել կոնդուկտորին աստիճանա-
բար թուլացնել նախասրահակի ձեռքի արգե-
լակի շղթան.

6. Նույն ժամանակ վագոնավարը ձգում ե
մինչև վերջ յետասրահակի ձեռքի արգելակը:
Այսուհետեւ աստիճանաբար թուլացնելով ձեռ-
քի արգելակի շղթան զգուշությամբ և գանդաղ
ընթացքով մոտենում ե պոկված վագոնին.

7. Միացնել պոկված վագոնը, ձեռքի ար-

դելակի շղթան ձգել մինչև վերջ և չնիկը դնել
արգելանիվի վրա.

8. Միացնել ողային փողերը (ըուկավա),
յեթե նրանք անվնաս են և ներս թողնելու ողը
արգելակային դաշնակը, կամ վակել կցիկ վա-
գոնի յետասրահակի կոռուկը, յեթե փողերը
վնասված են, ոժանդակ պահապանից արտա-
հեղ կափարիչով դուրս թողնելով ողը.

9. Անցնել նախասրահակը, ձգել ձեռքի ար-
գելակի շղթան և չնիկը դնել արգելանիվի վրա.

10. Յետասրահակի շղթան թուլացնել.

11. Կոնտրուլերի փոքրիկ բռնակը կանգ-
նեցնել «Առաջ» նշանի վրա, կոնտրուլերի մեծ
նեցնել արգելակը առաջին բաժանման վրա,
բռնակը ներփակել առաջին բաժանման վրա,
թուլացնել արգելակը և սովորականից սակալ
մեծ բռնակը փոխադրել առաջին յերթեվկու-
թյան բաժանման վրա.

114. Վերելքում կցիկ վագոնը մատորայի-
նից պոկվելու և թեքվածքով յետ դնալու դես-
քում, յետեվից ընթացող վագոնավարները
պարտավոր են վարդել հետեւյալ կերպ.

1. Անհապաղ անջատել հոսանքը, այսինքն
հանել կոնտրուլերի մեծ բռնակը ուժից.

2. Վորհե արգելակով արագ կանգնեցնել
վագոնը.

3. Կոնտրուլերի փոքր բռնակը փոխադրել
«Յետ» նշանի վրա.

4. Ահազանգել կոնդուկտորին.

5. Մեծ բռնակը դնել ուժի վրա և վորքան

Հնարավոր ե հեռանալ մոտեցող վագոնից.

6. Մինչ պոկված վագոնի վերջնականապես կանդնելը, կոնտրոլերի փոքրիկ բանակը պահել «Յետ» նշանի վրա և ձեռքի արգելակը պատրաստ վիճակում.

115. Կցիկ վագոնը հարթ տեղում կամ թեքածքի սկզբին պոկվելուց, վագոնավարը չնայած կոնդուկտորի զանգերին, պարտավոր ե վորքան հնարավոր ե շուտ հեռանալ կցիկ վագոնից՝ վագոնների դիպչելուց, վնասվածքից և ուղեվորներին խեղություն պատճառելուց խուսափելու համար:

116. Կցիկ վագոնը մատորայինից պոկելու գեղջում, կցիկ վագոնը կարգելակի ավտոմատորեն: Միացնելուց հետո, նախքան վագոնները ընթացքի դցելը վագոնավարը պետք է վարվի հետեւյալ կերպ.

1. Մինչև վերջ ձգում ե ձեռքի արգելակի շղթան և չնիկը դնում արգելանիվի վրա.

2. Մատորային վագոնը միացնում է կցիկ վագոնին, ինչպես նաև միացնում է ողային արգելակի փողերը.

3. Թուլացնում է ողային և կցիկ վագոնի ձեռքի արգելակները.

117. Պոկված վագոնը միացնելու անհնարինության դեպքում, յետեվից գնացող վագոնները, պոկված վագոնի վերջնականապես կանդնելուց հետո, պարտավոր են մերձանալ նրան և բուկսիրով հասցնել մինչև պահեստա-

յին գիծը: Այս դեպքում վագոնավարը պարտավոր ե ընթանալ զգուշությամբ հաջորդաբար ներփակված վագոններով.

118. Յեթե սարը բարձրացող վագոնը, գծում բացակայող հոսանքի կամ մոտորի վորյեվե անսարքության հետեւյանքով, կոկորդուրվել գեղի ներքե, վագոնավարը պարտավոր ե զեկավարել հետեւյալ կանոններով.—

1. Ամենայն խստությամբ արգելվում ե մինչ վագոնի լիակատար կանգնեցնելը նրան բանեցնելու համար վորյեվե միջոցի դիմելու.

2. Ողային արգելակի լիակատար սարքին լինելու դեպքում վագոնավարը պարտավոր ե մինչև վերջ ձգել ձեռքի արգելակի շղթան, չնիկը դնել արգելանի վրա, ողը ներս թողնել արգելակային դլանակը և ապա անցնել վագոնի զննության.

3. Ողային արգելակի բացակայության կամ անսարքության դեպքում, վագոնավարը պարտավոր ե կոնտրոլերի փոքր բռնակը փոխադրել «Յետ» նշանի վրա, կոնտրոլերի մեջբռնակը կանգնեցնել ելեքտրական արգելակի վրա և հասցնել մինչև վերջին բաժանումը: Այսուհետեւ ձգել ձեռքի արգելակի շղթան մինչև վերջ, չնիկը դնել արգելանիվի վրա, անջատել ելեքտրական արգելակը, կոնտրոլերի փոքր բռնակը կանգնեցնել «Առաջ» նշանի վրա և անցնել վագոնի զննման.

4. Շղթան կտրվելու, կամ ձեռքի արգե-

լակը վչանալու դեպքում, վագոնավարը պարտավոր է կոնտրոլերի փոքր բռնակը կանգնեցնել ելեքտրական արգելակի վրա և հասցնել նրան մինչև վերջին բաժանումը։ Այնուհետև ահազանդով իմացնել կոնդուկտորին, վոր նա յետասրահակի ձեռքի արգելակի շղթան ձգի մինչ վագոնի լիակատար կանգնելը։

5. Հաջորդ վագոնների բոլոր վագոնավարները դեպի իրենց շարժվող վագոնը տեսնելուց, պարտավոր են վարվել 110-րդ հոդվածում նշած կարգով։

6. Ամենայն խստությամբ արգելվում է վագոնավարներին այդ ժամանակ թողնել իրենց վագոնները։

119. Հարթ տեղում, վորտեղ արգելակած վագոնը ինքնիրեն չի կարող շարժվել տեղից, արգելակելուց հետո արգելակը պետք է թուլացնել, վորով և կապահովվի արգելակային զապանակների հարատեղ ծառայությունը։

ԶԳՈՒՇՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

120. Անպայման արգելվում է անհամաչափ արագ յերթեվեկություն։ Վորքան նեղ է փողոցը, այնքան վագոնի արագությունը պետք է լինի նվազ։ Համենայն դեպս վագոնի արագությունը չպատեք ե գերազանցի 20 կիլոմետրից մեկ ժամում։

121. Վագոնի շարժման ժամանակ վագոնավարի ամբողջ ուշադրությունը պետք է ուղղված լինի դեպի դիմք։ Զախ ձեռքը պետք

ե գտնվի կոնտրոլերի մեջ բռնակի և աջը՝ արգելակի բռնակի վրա։

122. Դռները բանալու և փակելու, ձեռքի արգելակի իվելը ըրջելու, վոտքի զանդի հարվածիչը ուղղելու համար և այլն, ամենայն խստությամբ արգելվում և շարժման ժամանակ վագոնավարին չուռ դալ, կամ հեռանալ կոնտրոլերից և արգելակներից։

123. Աշակերտների հետ յերթեվեկելու ժամանակ, վագոնավար-ուսուցիչը պատասխանատու յերթեվեկելության կանոնավորության և ապահովության համար։ Ուստի ամենայն խստությամբ արգելվում և վագոնավարին վագոնի շարժման ժամանակ նստել և դիտել չուրչը։

124. Զատիվայրով իջնելիս, փողոցների և ճանապարհների հատման, կտրուկ պտույտներում և նեղ իրողոցներում վագոնավարը պետք է ընթանա այնքան զգույշ, վոր հնարավորություն ունենա ամեն մի պահին կանգնեցնել վագոնը։

125. Ճանապարհների փոխհատման վայրերում, ուղերաժանքներում, ոլորաններում, ճյուղավորումներում, սլաքներին մոտենալիս, վագոնավարը պետք է դանդաղեցնի վագոնի ընթացքը՝ սլաքները և ճյուղագծերը (կրեստովինա) ջարդելուց ու վագոնը ըելաներից գլորելուց խուսափելու համար։

126. Սլաքներին մոտենալիս վագոնավարը

պարտավոր ե հետեւել սլաքի ծայրի ուղղության և ծայրի հակառակ շարժման ժամանակ չանցնել սխալ գետեղված սլաքի վրա, կամ յերբ սլաքի ծայրը սերտ չի կպած բելաների կողին.

127. Ամենայն խստությամբ արգելվում ե վագոնավարին հույսը դնել սլաքավարների վրա: Յուրաքանչյուր վագոնավար պարտավոր ե հիշել գիծը վորովնա ընդառում ե և անձամբ համոզվել, վոր սլաքը գետեղված ե ճիշտ:

128. Վագոնավարը արագընթացքի ժամանակ և թեքվածքներում պարտավոր ե պահպանել միջանցները, վոչ պակաս յերեք մաչտ զանգան գծերի վագոնների մեջ և վոչ պակաս չորս մաչտ միենույն գծի վագոնների մեջ:

129. Մոտենալով վերելքին, վագոնավարը պարտավոր ե սպասել մինչեւ նախընթաց վագոնի սար բարձրանալը: Ամենայն խստությամբ արգելվում ե սարը բարձրանալ խմբերով, վորովհետեւ դրանից խիստ ծանրաբեռնվում ե մալուխը (կարել) և կարող ե անջատվել յենթակայանի ավտոմատը:

130. Կանգառին մոտենալիս վագոնավարը պարտավոր ե նախորոք անջատել հոսանքը, վորպեսզի վագոնը կանգառներին չմոտենա մեծ արագությամբ և առիթ չլինի խիստ արգելակել նրան:

Ծանրություն.— Վագոնի խիստ արգելակումը կանգառներում առաջացնում է հոսանքի անարդյունավետ սպառում,

ցնցում ե վագոնի թափքը և արագ մաշեցնում արգելակային կոճղերը, կալանդները, ըելմները:

131. Յեթե կանդառում գտնվում ե վագոնայդ դեպքում, վագոնավարը պարտավոր ե մտենալ նրան ամենադանդաղ ընթացքով և կանդնել առաջին վագոնից 5 մետր հեռավորության վրա՝ ուղեվորներին անցք թողնելու համար:

132. Վագոնավարը պարտավոր ե ճեռք առնել բոլոր միջոցները նախընթացող վագոնին զդիպչելու համար: Նախընթացող վագոնին զդիպչելու համար վագոնավարը յենթարկվում ե ամենախիստ տուժանքներին մինչ ճեռք առցումը առանց նախազգուշացման, վորովհետեւ բացի վագոնի փչացումից առաջացած վնասներից կարող են տուժել նաև ուղեվորները:

133. Կանգառից վագոնավարը կարող է շարժվել միայն նախընթացող վագոնի առնը վազն 3 մատչա հեռանալուց հետո, վորովհետեւ նախընթացող վագոնի հանկարծակի կանգառի ժամանակ յետեղից գնացող վագոնը չի կարող ժամանակին կանգնել:

134. Յեթե վագոնների կանգառը գտնվում է ոլորանների, ճանապարհածյուղերի, ճանապարհների արամախաչման, կամ միացման մոտ, վագոնավարը պարտավոր ե մինչեւ դեմադեմ յեկող վագոնի կողմից գծի կամ ոլորանի

աղատումը սպասել կանգառումը, վորվհետեւ
վագոնի յետեռում կարող են լինել մարդիկ և
կառքեր.

135. Յեթե վագոնավարը գծում, կամ նրա
մոտ նկատում ե արգելք (շարժվող բազմու-
թյուն, մարդ, կառք, սայլ և այն) պարտա-
վոր ե արգելքից 40 մետր հեռավորության վրա
անհապաղ անջատել հոսանքը և ձեռք առնել
միջոցներ կանգնեցնելու վագոնը, չըավակա-
նանալով զանգահարումներով, վոր կարող են
լսելի չլինել.

136. Վագոնավարը առանձնապես պետք ե
զգուց լինի վագոնի առջեվից կամ գծի մոտ
մարդ նկատելուց, վորովհետեւ բացի դատա-
կան պատասխանատվությունից վագոնավարը
պատասխանատու յէ նաև իր խղճի առաջ։ Ա-
մենանվազագույն վտանգի դեպքում վագոնո-
վարը պարտավոր ե կանգնեցնել վագոնը հաշվի
չառնելով շարժման կասեցումը կամ հապա-
ղումը։

137. Յեթե բելսների վրա գտնվում են
այնպիսի խոչընդոտներ, ինչպիսին են քար,
փայտի կտոր և այլն, վագոնավարը պարտա-
վոր ե անջատել հոսանքը, կանգնեցնել վա-
գոնը և ճանապարհից հեռացնել խոչընդոտը.
այլապես վագոնը կարող ե դռւրս գալ գծից.

138. Յեթե վագոնավարից պահանջվում ե
ընթանալ առջեվից կցիկ վագոնով, նա պար-
տավոր ե անցնել ըստ ընթացքի նախասրահա-

կը, բոլորովին բանալ կցիկ վագոնի դռները
և մատորը շարժման դնել վոչ ուշ քան ըստ ըն-
թացքի նախասարահակում կոնդուկտորի
կանգնելը և գիծն ազատ լինելու մասին նրա
կողմից ազդանշան տալը.

139. Ուժեղ անձրեվների ժամանակ, յերբ
ցածրավայրերը հեղեղում են ջրով վագոնա-
վարը պարտավոր ե ղեկավարվել հետեւյալ
կանոններով.

1. Զուրը բելսներից 9 սանտիմետր բարձ-
րանալու դեպքում, վագոնավարը կարող ե ա-
ռաջ ընթանալ ներփակելով մատորները միայն
հաջորդաբար։

2. Զուրը բելսներից 9 սանտիմետր վեր
բարձրանալու դեպքում, վագոնավարը պար-
տավոր ե ջուրն անցնել առանց հոսանքի և կա-
յարանը գալուց հայտնել կայարանապետին,
վոր գիծը հեղեղված ե.

140. Բուքի և սառցապատման ժամանակ,
յերբ վագոնն ընթացք տալուց անիվները խիստ
բուքսիրում են, վագոնավարը պարտավոր ե
անջատել հոսանքը, ողային կամ ձեռքի ավա-
զամանով բելսներին տալ ավազ և նորից ներ-
փակել մինչեւ յերկրորդ բաժանումը։ Բերու-
քի կամ սառցապատման ժամանակ ոգտակար
ե գիծը բանալ միացված վագոնների գնացքով.

141. Վագոնի հարատեվվ բուքսիրման ժա-
մանակ, վագոնավարը պարտավոր ե վարփել
հետեւյալ կերպ.

1. Անջատել հոսանքը և կոնտրոլերի փոքրիկ բանակը դնել «Յետ» նշանի վրա.

2. Զանգերով նախազդուչացնել կոնդուկտորին վագոնի յետին ընթացքի մասին.

3. Վագոնը 8-13 մետր յետ տալ.

4. Փոքրիկ բոնակը տեղաշարժել առաջ և սելսների վրա ցրելով ավազ փորձել վագոնը շարժելու գեպի առաջ.

142. Անձրեվների և ճանապարհների վատժամանակը, յերբ մարդատար և բեռնատար կառքերի շարժումը բավականին դժվարանում է, իսկ ըելսները ծածկվում են բարձր ցեխով, վագոնավարը պարտավոր է առանձնապես ուշադիր հետեւել արգելակների և ավազամանների ներգործության վրա և շարժվել հատուկ սպուշությամբ հաշվի չառնելով շարժման հաղաղումը և կասեցումը:

143. Վաղոնավարը պարտավոր է իր կողմից վագոններում և հատկապես արգելակների ու ավազամանների վերաբերյալ հայտաբերած անսարքության մասին ժամանակին հայտնել և պահանջել ուղղելու, այլապես դժբախտ պատահարից հետո վագոնի անսարքության մասին բերած պատճառաբանությունները հաշվի չեն առնվել:

ՀԱՆԿԱՐԾԱԿԻ ԿԱՆԳԱՌՆԵՐ ԳԾՈՒՄ ՅԵՎ
ՎԱԴՈՆԻ ԶՆՆՈՒՄ

144. Յեթե կոնտրոլերի մեծ բոնակը

դրված ե առաջին բաժանման վրա և այնուամենայնիվ վագոնը չի շարժվում, վագոնավարը շառավագոր է անհապաղ մեծ բոնակը դնել «կանգ առ» նշանը դր, և առաջ առաջ արգելակել վագոնը և ներփակել չիկացման արգելակելու ստուգելու. արգյուք կա հոսանք և անցնում ե նա դեպի աղեղը.

145. Յեթե լապտերները չեն վառվում վագոնավարը պարտավոր է ստուգել, արգյուք.

1. Շարժվում են մյուս վագոնները.

2. Աղեղը չփլվում է լարին.

3. Լարը չի սառչել.

4. Աղեղը չի կանգնած ողային ցանցի գատիչի փայտե միջարկի տակ (սելցիոնի սուկ).

5. Արգյուք չի այրված կուլիսների տախտակին ամրացված գլխավոր հաղորդալարը:

6. Անիվները չեն նկանգնած ավազի, կամ ձյունի հաստ շերտի վրա:

146. Յեթե ներփակելուց հետո լապտերները վառվեն դա ապացույց է, վոր գծում և գլխավոր լարում կա հոսանք: Այս դեպքում վագոնավարը պարտավոր է հերթով ստուգել, արգյուք.

1. Վագոնը չի արգելակված-նախասրահուկից կամ յետասրահակից ողային կամ ձեռքի արգելակով.

2. Չի անջատվել ավտոմատը.

3. Ներփակված է կտրիչը.

4. Չի վառվել ապահովիչ թիթեղիկը.

5. Զի թուլացել կոնտրոլերի վորեւե մեկ
ժամը.

6. Զի փչացել մոտորներից վորեւե մեկը.

147. Կատարելով նշած ստուգումները,
վագոնավարը պարտավոր ե սպասել հաջորդ
վագոնին և շարժումը չկասեցնելու համար
բուքսիրով հասնել մերձակա պահեստային
շիծը:

148. Յեթե աղեղը վորեւե մեկ մասում չի
չփում լարին, վագոնավարը պարտավոր ե
կոնդուկտորին ուղարկել կտուրը և լարը դեպի
աղեղը ձգելու համար առաջարկել նրան աղեղի
մանակ վոխաճգել լարի վրայով. նույն ժա-
պարանը վագոնավարը դանդաղ ընթացքով
պարտավոր ե վագոնը շարժել առաջ.

149. Յեթե լարը սառչել ե, վագոնավարը
աղեղը մի քանի անգամ իջեցնելով խիում ե
նրանով լարին և թափում ձյունը.

150. Յեթե աղեղը կանգնելու լինի զատիչի
փայտե միջարկի (վկադիչ) տակ, վագոնա-
վայտե միջարկի (վկադիչ) տակ, վագոնա-
վարը պարտավոր ե ինդրել կոնդուկտորին լա-
րի և աղեղի մեջ կոնտակտ ստեղծելու համար
թություն աղեղը ձգել դեպի առաջ շարժման ուղ-
ղությամբ: Այնուհետև կոնտրոլերի մեջ ըստ
ներփակել առաջին բաժանման վրա և
վագոնը շարժել առաջ.

151. Յեթե վագոնը բոլոր անիվներով
կանգնելու լինի ձյունի կամ ավազի չերտի
վրա վագոնավարը պարտավոր ե յետեւի ա-

նիվի գծերը մաքրել, հանձնել կոնդուկտորին
իր թաթապանները և խնդրել նրան այնպես պա-
հել կցանը, կամ վորեւե այլ մետաղյա մասը,
վոր նա չփափի բելսի և անիվի հետ: Այնուհետև
վագոնավարը պարտավոր ե ներփակել կոնտ-
րոլերի մեջ բոնակը մինչ առաջին բաժանմանը
և վագոնն շարժել առաջ.

Ծանոթություն.— Նախքան հոսանքի
ներփակելը, վագոնավարը պարտավոր ե
նախազդուչացնել կոնդուկտորին և ուղե-
վորներին, վորպեսզի նրանք գտնվելով
փողոցում չդիպչեն վագոնին՝ այրվածք-
ներից և հարվածներից խուսափելու հա-
մար:

152. Այրված թիթեղիկը փոխելուց կամ
վորեւե մոտորի անջատելուց հետո, վագոնա-
վարը պարտավոր ե անձամբ ստուգել. արդյոք
ներփակված ե կտրիչը և ավտոմատը:

153. Յեթե առջեվի վագոնի կասեցման և
գծում հոսանքի բացակայության հետեւանքով
բոլոր վագոնները ստիպված լինեն կանդնել,
վագոնավարը պարտավոր ե պահպանել հետե-
մյալ կանոնները.

1. Ամենայն խստությամբ արգելվում ե
հեռանալ մոտորային վագոնի նախարահա-
կից դեպի ուրիշ վագոններ, կամ իր վագոնի
ներսը.

2. Իր վագոնը շարժման մեջ չդնել մինչեւ
համարնթաց վագոնը յերեք մաշտով չհեռանա.

3. Կոնտրոլերի մեծ բռնակը ներփակել
դանդաղորեն և բռնակը առաջին յերթեվեկու-
թյան կամ բանվորական բաժանման վրա պա-
հան սովորականից շատ.

154. Յուրաքանչյուր ըեյսից հետո վերջ-
նակետում, վագոնավարը պարտավոր ե շրջել
վագոնը և ստուգել, թե արդյո՞ք.

1. Զեն տաքանում բուքսերը կամ սռնա-
կալը.

2. Զեն տաքանում ձգված կոճղերից կա-
լանդները.

3. Զեն մաշվել և չեն հեռացել կալանդ-
ները.

4. Զի սպառված ամբողջ ավազը.

5. Զի մաշվել ալյումինին և չի թքվել
աղեղը.

155. Գծում և վերջակետերում նկատաձ
յուրաքանչյուր անսարքության մասին վա-
գոնավարը պարտավոր ե հայտնել վերահսկի-
չին, կայարանապետին, կամ ավագ վերա-
հսկիչին և պահանջել վերացնելու յերթեվե-
կության ապահովությանը սպառնացող ան-
սարքությունները:

156. Ամենայն խստությամբ արգելվում է
առաջին հերթափոխ վագոնավարին վա-
գոնի վերանորոգումը ձգձգել մինչեվ
յերկրորդ հերթափոխը և ընկերոջը հանձնել
նախահայտ անսարք վագոն, նամանավանդ
վոչ սարքավորված արգելակներով:

157. Վագոնը շարժումից հանելը կարող է

կատարվել միայն յերթեվեկության ծառայու-
թյան անձնակազմի ավագ գործակալների գի-
տությամբ, վորոնք հսկում են շարժման վրա.

158. Մոտորային վագոնը կարող է հան-
վել գծից հետեւյալ դեպքերում.

1. Յեթե խիստ թեքվում, կամ կոտրել է
աղեղը.

2. Յեթե հաճախ անջատվում ե ավտոմա-
տը կամ այրվում յերեքից ավել ապահովիչ
թիթեղիկներ.

3. Յեթե այրվում ե մոտորներից մեկը,
կամ ելեքտրական սարքավորման վորևե մաս.

4. Յեթե անսարքին ե լուսավորությունը.

5. Յեթե սաստիկ տաքանում ե բուքսան,
կամ սռնակալը.

6. Յեթե թուլացել է վորեւ արգելակ.

7. Յեթե մաշված է կամ պայթում ե կոճ-

ըր.

8. Յեթե չի իջնում ցանցը, կամ չեն աշ-

խատում ավտոմատները.

9. Յեթե կոտրվում են սայլակի փայտե
ապահովիչները.

10. Յեթե ավագ գործակալները գտնում
են անհրաժեշտ վագոնը հանել գծից:

159. Կցիկ վագոնը գծից հանվում է ողա-
րին արգելակի կամ լուսավորության անսար-
քության հետեւվանքով.

160. Համենայն դեպս վագոնավարը ու-
ղեկորներին պարտավոր ե հասցնել մինչեվ
մերձակա կայարանը.

161. Վագոնը դեպո ուղարկելուց վագոնավարը պարտավոր ե վագոնը դեպո ուղարկող անձնավորությունից պահանջել աշխատանքի հղադիր, նշելով վագոնի ուղարկման ժամանակը և անսարքությունը.

162. Դեպո գալուց վագոնավարը պարտավոր ե անձամբ հերթապահ մանտյորին մատնանշել վագոնի անսարքությունը և գծից հանելու պատճառը, ինչպես նաև պատասխանել մանտյորի բոլոր հարցումներին:

Ծանոթություն. — Հաճախ միայն աշխատաղ վագոնավարի մանրամասն հարց ու փորձից կարելի յե պարզել վագոնի անսարքությունը և արագ վերացնել այդպիսին:

163. Ամենայն խստությամբ արգելվում ե անսարքության հետեւյանքով գծից հանած վագոնը ճանապարհին հանձնել հերթափոխ վագոնավարին, վորովհետեւ հերթափոխ վագոնավարը չի կարող մանտյորին տալ այն տեղեկությունները, վորոնք անհրաժեշտ են վագոնը ուղղելու համար:

164. Վագոնը ուղղելուց, կամ փոխելուց հետո վագոնավարը ինչպես առավոտյան մեկնելուց նորից զննում ե վագոնը և վագոնների վերանորոգման մատյանում ճիշտ նշում դեպոյից մեկնելու ժամանակը՝ վագոնը վերանորոգման մեջ և պարկում գտնվելու տեղությունը վորոշելու համար:

ՎԱԳՈՆԱՎԱՐՆԵՐԻ ՑԵՎ ԿՈՆԴՈՒԿՏՈՐՆԵՐԻ
